

ԱՆՏԻՊ ՏԱՂ ՄԸ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻԻ

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԴԱՏԱՍՏԱՆԻ(*)

Յորժամ յիշեմ զօր սոսկալի եւ անախա դատաւորին (1),
Սարսափելով հիւանդանամ, սարսուռ բռնէ զիս ջերմալին.
Յորժամ տարերբքն զըղըրդին եւ աստեղաց դիրբքն թափին,
Լուսին արեւըն մըթանան, երկինք երկիրս զըղըրդին.
Հըրով դատէ զամէն աշխարհս, լինի ի չափ ջրհեղեղին,
Եւ հրդեհեալ զաշխարհս այրէ, վէմք եւ բլուրք քան զմոմ հալին,
Որոտք ճայթմունք կայծակ լինին, գետք յորդորեալ՝ ամպք խառնակին (2).
Ապա Որդին Հօր Միածին, լուսապայծառ նըշան նալին,
Հանդերձ զօրօք հրարուն սեռին եւ հրեղինաց գունտք ծաւալին,
Ի սուրբ քաղաքն յերուսաղէմ երկնից յերկիր վայրաբերին (3).
Զօրք հրեշտակաց փառաբաննն օրհնեն զԱստուած զՀայր եւ զՈրդին (4),

(*) Թլկուրանցիի այս տաղը, որ անծանօթ էր ցարդ, գտնւմ հին տաղարանէ մը ընդօրինակութեանց տեսիլ մը մէջ զոր Արամ Անտոնեան հանեցաւ մեր տաճարութեան տակ դնել: Անտոնեանի խնդրանով այդ ընդօրինակութիւններն բրած է Գառնիկ Տէվէնեան որ «Գնէլ» ծածկանունով գրուածքներ հրատարակած է «Արեւելեան Մամուլ»ի, «Բանբեր»ի, «Մասիս» օրաթերքի մէջ (1897) եւ «Մեր Տարեցոյց»ին (1911) մէջ) երբ իբր յեղափոխական տարբերդ բանտարկուած էր (1908ին): Տէվէնեան իր հաւաքածուն վերջին

էջին մէջ կ'ըսէ քե իր ունեցած մէկ «հին տաղարան»էն օրինակած է այդ տաղերը, բայց զորոշութեան բուականն ու տեղը չէ նշանակած: Թլկուրանցիի նոյն տաղին ուրիշ մէկ օրինակը ստացնմ այս օրես Գ. Յ. Քիւրեսեանէն որ զայն հաղած է իր ունեցած մէկ ձեռագիր տաղարանէն որուն գրչութեան բուականն է 1881: Երկու օրինակներուն համեմատութեամբ կազմուած բնագիրն է որ կը հրատարակենք: Նշանակած ենք տարբերութիւններ (Տէվէնեանի ձեռագիրը՝ Ա. Քիւրեսեանի ձեռագիրը՝ Բ): (Մ. Խ.)

(1) Ա. Սոսկալին, Բ. Սոսկալի. Ա. եւ Բ. եւ զանաչառ:

(2) Ա. Որոտք կայծակ լինին գետին եւ յոր. զորեալ ամպք խառնակին. Բ. Որոտ ճայթմունք

կայծակ լինին, գետք յորդորեալ՝ ամպք խառնակին:

(3) Ա. Քաղաքն յերուսաղէմ... վայրաբերին. Բ. Քաղաք յերուսաղէմ... վերաբերին:

(4) Ա. Հայր. Բ. զՀայր:

Սարսափին անմեղութեամբ (5) եւ սոսկալի դիմօք նային.
 Գերեզմանք (6) փակեալ բացուին, հողացեալ մարմինք (7) նորոգին,
 Կամաւ անհղ դատաւորին, ծայնիւ փողոյ Գարբիէլին (8),
 Հոգիք սլանան արծրւապէս եւ ըզգենուն զանեղծ մարմին (9),
 Յառնեն եւ զան ի դատաստան, յառազաստ անմահ փեսային (10).
 Կարգին աթոռք դատաստանին, արդարութեան կըշիռք դնին,
 Պըսակք (11) յայտնին, կուսանք խնդան եւ առազաստքն (12) զարդարին.
 Աղքատասէրքն ուրախանան, աղքատատեացքն (13) տրտում լինին.
 Ամենըն կարգացող լինին, իմանան ըզլարն ու զբարին (14),
 Այն որ աղքատն է կերակրեր եւ զգեցուցեր հանդերձ մերկին (15),
 Հիւանդն ի տես է զընացեր եւ արբուցեր է (16) ծարաւին,
 Ով սրբութեամբ (17) զանծն է մաշեր, աղերսելով աղօթք արեր,
 ԶԱրքայութիւն (18) է ժառանգեր, ի հետ սրբոցն է պըսակուեր.
 Արդարք դասին յաջակողմեան եւ մեղաւորքն ի յահեկան (19).
 Արդարք լըսեն զծայն օրհնութեան որ պահեցին ըզպատուիրան (20),
 Յայնժամ շնացողքն (21) կորընչին եւ ուրացողքն փափաքին,
 Արեան արբուքն սարսափին, խաչահանողքն կործանին (22),
 Գողք աւազակք լան անճարակ, մատնողք դասին հետ Յուդային (23),
 Եւ ի գեհնան (24) հուր բորբոքին եւ ի խաւարն աղլամղջին,
 Յանկութիւն անցանի աշխարհի եւ անքուն որդն ոչ մեռանի (25),

(5) Ա. Սարսափին ճեղծութիւնն. Բ. Սարսափին անմեղութեամբ:

(6) Ա. Գերեզմանք. Բ. Գերեզմանք:

(7) Ա. Հողացեալ մարմինն նորոգին. Բ. Հողացեալք մարմինըն նորոգին:

(8) Ա. ի մէջ այս տողը «Հոգիք սլանան» տողէն յետոյ դրուած է. Ա. Զայնէ փողով. Բ. Զայնիւ փողով:

(9) Ա. Մարմինն. Բ. Մարմինն:

(10) Ա. Առնեն ի գործ ի դատաստան, ի հարսանիսն անմահ փեսայն. Բ. յԱռնեն և զան ի դատաստան ի յառազաստ անմահ փեսային:

(11) Ա. եւ Բ. Պըսակ յայտնին:

(12) Ա. եւ Բ. Առազաստ:

(13) Ա. Աղքատայառաց. Բ. Աղքատատեացքն:

(14) Ա. Բարին. Բ. զԲարին:

(15) Ա. Զպատուցեր այն որ մերկին. Բ. Զպեցուցեր հանդերձ մերկին:

(16) Ա. Հիւանդն. Բ. զՀիւանդն. Ա. Եր... է... Բ. է... է:

(17) Ա. Ով սրբութեամբ. Բ. Սրբութեամբ:

(18) Ա. Մարքայութիւնն. Բ. Զարքայութիւնն:

(19) Ա. Արդարք... ի աշեկան. Բ. Արդարք...

(20) Ա. Զպատուիրան. Բ. Զպատուիրանն:

(21) Ա. Ուրացողքն կորընչին. Բ. Շնացողքն...

(22) Ա. Արեան արբուքն... խաչահանողքն. Բ. Արեան արբուքն... խաչ հայհոյողքն:

(23) Ա. Գող աւազակ... յետ Յուդային. Բ. Գող աւազակք... Հետ Յուդային:

(24) Ա. Եւ իգական... Բ. Եւ ի գեհնան:

(25) Ա. Յանկութիւն անցանէ աշխարհի եւ անքուն որդն ոչ մեռանի. Բ. Յանկութիւն անցանի յաշխարհէ եւ անքուն ոչ մեռանի:

Ամէն մարդ իր գործոցն առնէ, յայտնի լինի չարն ու բարի (26):
 Ինչեւ Յովհաննէս Թլկուրանցի, զքեզ աղաչենք (27), Հա՛յր Միածնի,
 Յաջակողմեանդ քում դասեա՛ որ զքեզ Աստուած խոստովանի (28):

(26) Ա. Ամէն ճարդն իր գործոցն առնէ. Բ.
 Ամէն ճարդ իր գործոցն յառնէ: Ա. Բարի. Բ.
 Բարին:

(27) Ա. Թուրքուրանցի... աղաչենք. Բ. Թլլ-
 կուրանցի... աղաչենք:

(28) Ա. Յաջակողմեանդ... խոստովանի. Բ.
 Յաջակողմեանդ... խոստովանին:

Հ Ե Ր Ո Ս Ը

Qui n'a plus qu'un moment à vivre
 N'a plus rien à dissimuler.

QUINAULT. — ATYS.

(Արտակարգ դատաւարութիւնը վերջանալու մօտ է)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱԽԱՅԸ (Շարունակելով).
 — ... Արտակարգ է ծանաւանդ անոր Համար այս
 դատաւարութիւնը, որ մտածուած կերպով, գործին
 լայն ծաւալ տրուած է եւ ճառուել երկրի մէկ ծայ-
 րէն միւսը արձագանգն է միայն այս գործին: Ա-
 նուրանալի է պարագան՝ որ ոճրագործը կը պատ-
 կանի այն Հայրենիքին որուն գուցէ վիճակուեցաւ
 ամենադաւն բաժինը վերջի պատերազմին մէջ: Ես
 ամենախոնարհ կերպով կը խոնարհեմ զուրիս այդ
 Ժողովուրդի մեծ վշտին առջեւ, ինչպէս խոնարհեմ
 էք դուք, ինչպէս խոնարհեմ են աշխարհի բոլոր
 լուսագոյն դաւակները: Բայց այս պարագան ստեղ-
 ծած է Ժողովրդական այնպիսի նպաստաւոր տրա-
 ճաղորութիւն գէպի ոճրագործը, որ չէր կրնար իր
 արդիւնքը չունենալ խնդրի լուծման մէջ, եթէ
 դուք, պարոն դատաւարներ, անդիտանայէք արժէքը
 ամբողջային տրամադրութիւններուն եւ ձեր աչքերը
 վարժուած չըլլային թափանցելու իրողութիւններու

խորքը: Այն թէ ինչու ես իրողութիւնները մեր-
 կացուցի եւ քննեցի ծօտէն, առանց նախապաշա-
 րուծի, առանց կանխակալ զգացումներու:

Երկու ցեղեր իրարու թշնամի են դարձած. ին-
 չա՛ւ, Որովհետեւ այդ երկու ցեղերու՝ որ կը զբա-
 յանուին Նոյն Հողաճախին վրայ՝ շահերը խոտոր կը
 Համեմատին: Մէկ ցեղը, Հին ու բարձրագոյն քա-
 դաքակրթութեան մը պատկանող, յաւերժական ըս-
 պանալիքի պէս կ'երեւայ ուրեմն միւս ցեղին, որ
 յետանաց է: Ձկայ ուրիշ ելք: Կամ մէկին կամ
 կամ միւսին է ապագան այդ Հողաճախի վրայ:
 Առաջինը անոր կ'ուզէ տիրանալ խաղաղ ճանա-
 պարհով, գործածելով իր քաղաքակրթութեան զէն-
 քերը: Միւսը, դեւ կիսաքաղաքակրթ Ժողովուրդ,
 միայն իր ֆիզիքական ուժին է ապաւինած: Եւ
 օգտուելով պատեհութիւնէն զոր պատերազմը կը
 ներկայացնէր՝ ան իր ֆիզիքական ուժը գործադրեց
 եւ կատարեալ տէրը դարձաւ այդ երկրամասին: Ա-